և ամթայից մնացին։ Եւ այս եպիսկոպոս և Կամենիցի եպիսկոպոսն Գժանց Տեառ՝ եկին ի եկեղեցին մերոյ, և տեսին զպատարագն մատչելն, և զմկրտութեան կարգն և զխորհուրդն. և բազում հարցաքննութիւն արարին ի մէնջ, և մեք ազգս Հայոց ըստ պատշաճի իրի պատասխանի արաք նոցա. զոր և փառս տալով գոհացան զԱստուծոյ, որ է օրհնեալ։

1571. Թվ. ՌԺԹ. Փետրուարի Զ, օրն երկուշաբթի Բուն բարեկենդանի։ Ի քաղաքս Կամենիցս ի յայսմ ամին՝ մեծ զեղայարուց եղեւ, զոր քաղաքին զխապախներն կոտորեց, և զՀրաղացքներն աւերեց, և զկարմունջներն տարաւ. և զդեղանքն հացի (համբարք ցորենոյ) և խոտք շատ տարաւ. և բազում պակասութիւն արաւ քաղաքիս և ամենեցուն։ Զոր այս ամենայն եղեւ վասն բազում և զանազան մեղաց մերոց. զոր Տէր Աստուած զվերջն ի բարին դարձուսցէ, և ամենեցուն մեղաց Թողութիւն պարգեւեսցէ. ամէն։

1571. Թվ. ՌԺԹ. Օգոստոսի ԺԵ. Հրամանաւ Թագաւորին երեք իշխանք եկին ի Կամենիցս, որք էին Լիւսդրադորներ (քննիչք), և շրջեցան ընդ ամենայն աշխարհն և ընդ քաղաքն Թագաւորական, և զամենայն ինչ հարցաքննեցին՝ զկարգն և զսահմանքն, և ի գիր առին, և գնացին. և կացին երեք շաբաթ. և մինն ի նոցանէ եկաւ ի եկեղեցին Հայոց, որ էր Թագաւորին սեգրըդար (խորհրդական կամ դպիր)։

1571. Թվին. ՌԺԹ. Հոկտ. ԺԵ. Բան Վլոտքո Մացէյ՝ որ էր իշխան քաղաքիս, առ Աստուած փոխեցաւ. զոր Տէր Աստուած ողորմի իւր հոգոյն, և ընդ բարեպաշտ իշխանսն դասեսցէ, և երկնից արքայութեան արժանի արասցէ. քանզի յոյժ բարեհոգի ոմն էր, հեզ և խոնարհ. մանաւանդ զՀայոց ազգն քան զամենեսեան առաւել սիրէր և ընդունէր. և էր սդարոսդայութեան (աւագութեան) նորա ամք 28 [1]։

1571. Թվ. ՌԺԹ. Դեկտ. ԻԱ, օրն է հինգշաբթի։ Բան Բոդացքիյ, Բան Մկրտչայ նստաւ իշխանութիւն Կամենից քաղաքիս, հրամանաւ Թագաւորին. զոր Տէր Յիսուս տացէ նմա հոգի հեզութեան և երկիւղի և աստուածպաշտութեան, զի լիցի ըստ հրամանի սրբոց պատուիրանացն Աստուծոյ։

1571. Թվ. ՌԺԹ. Բարեպաշտ Թագաւորն մեր Զիկմունդ Ակուստուս խռովեցաւ ի վերայ քաղաքիս Կամենիցոյ, և զտամղան (աղատագիր մաքսի) որ չնորհել էր քաղաքացոց՝ որ չէին ի տալ տամղա Իլախի աշխարհ, նայ հիմիկ յայլվի հրաման առաւ՝ զի տայցեն. բայց յոյս ունին քաղաքացիքն՝ զի այլվի գթասցի և ողորմեսցի ի վերայ այս աղքատ քաղաքիս, և կրկին ազատութիւն չնորհիցէ, որպէս առաջ քան զայս. զի թէ ըստ պատշաճի իրացն երթայցեն և հայցեսցեն ի նմանէ, կարող է նոցա զայդ առնել, որպէս քրիստոսասէր Թագաւորն։

1. Զնոյն բան գրէ և այլուր, յաւելլով, «հասեալ ի բարի և խորին ծերութիւն»։